ՀԱՍՑԷ

Rédaction du Journal arménien
ARCHALOUYCE
(EGYPTE) LE CAIRE

Տնօրէն — Խմբագիր պատասխանատու
ԵՂԻՇԷ ԹՈՐՈՍԵԱՆ

Չի հրատարակուած ձեռագիրները ետ չե'ն տրուիր։

Բաժանորդագրութիւնը կանխիկ է. իսկ ծանուցումները կ'ընդունուին համաձայնութեամբ։

# ԱՐՇԱԼՈՅՍ

## ԱԶԳԱՅԻՆ. ԳՐԱԿԱՆ. ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆԿԱԽ ՀԱՅԱԹԵՐԹ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ ՕՐԵՐԸ

ՊԱՅՄԱՆՔ

ԵԳԻՊՏՈՍ
Տարեկան գրուշ 30

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ
Տարեկան ֆրանք 10

Բաժանորդք ՅԱՒԵԼՈՒԱԾ ներու փոխարէն վճարում մ'ընելու պիտի ըլլան.

Թէ՛ ԱՐՇԱԼՈՅՍԻ և թէ՛ ՏՊԱՐԱՆԻՆ վերաբերեալ նիւթական խնդրոց համար պէտք է դիմել Խմբագրութեան հասցէով բերքիս Մատակարարին. որ է՝

ԴԻՏՐԻԿ ԳԱԶԱԶԵԱՆ

ԱՐՏՕՆԵԱԼ ԵԳԻՊՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵՆԷՆ

ՀԱՏԸ 20 ՓԱՐԱ ՈՂՋ



ՊԵՏՐՈՍ ԷՖ. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ
Վանեցի եւ Արաբկերցի իրմէ քառասունեակ խնդրանօք կը հրատարակուի.
Տե՛ս նաև «ՍՓԻՆՔՍ» անուն գրքին մէջ։

## ՈՃՐԱԳՈ՞ՐԾ ԹԷ ԲԱՐԵԳՈՐԾ

Եգիպտոսի մէջ գիւղին միջոց մը կայ՝ կ'ըսեն, չարագործութենէ ի բարեգործութիւն մէկ երկու քայլով ցատկելու համար ...։

Կոմիտակի յաջողութիւններ հետըզհետէ արմատապէս հաստատել կուգան այս ենթադրութիւնները։

Տեսակ մը անհոգութիւն և թմրութիւն տիրած է մանաւանդ հայ ժողովուրդին վրայ, հակառակ ի ձայն փողոյ ծանուցուած «արթնութիւններուն....»

Կուսակցական, ընկերական, խնամական, շահախնդրական և այլ այս թուումն մասանցն մէջ զետեղելը կարելի ժանգոտած օղակներ՝ ջլատած ըլլալու են Եգիպտահայուն զգայնութիւնն ու արթնութիւնը։

Եւ այս թոհ ու բոհին մէջէն, յանկարծ կը տեսնուի մէկը՝ որ առանց իր շուրջը նկատելու, բարեգործ, ազգասէր, ու հանրութեան պէս պէս շահերը նկատող կը ցցուի մեր դէմը։ Իսկ մեր դատապարտելի և տխրատեսող անհոգութիւնը կը տիպէ մեզի որ՝ պէտք է զամէն աւելի կարևորութիւն ընծայենք այդ կարգի ուղղամիտներու!! բարեգործներու!! և չես գիտեր ինչերու ինքնազոհութիւններուն....։

Դուն հազար ու մէկ փորձերով հաստատած ես, սորված և համոզուած ես անոնց կեղծումները, չարագործութիւնները, ընկերական կեանքին մէջ ունեցած վայրագաւոր ընթացքը, իր ընկերոջը կենաց ու պատւոյն և ստացուածքին դէմ լարած դաւադրութիւններն ու աւազակային ընթացքը, ստութիւնն ու խարէբայութիւնները և մինչև մարդասպանութեան և ոճրագործութեան հասնող դաւաճանութիւնները։ Բայց ան՝ և իրեն հետ ուրիշ մէկ քանիներ ալ՝ իրենց բոլոր ճիգը կը թափեն հալած իւղի պէս քեզի կլլեցնելու թէ՝ իրենք կեղծարար չեն, աւազակ չեն, ոճրագործ չեն, դաւաճան չեն...։

Եւ այս սխրանքները ե՛րբ երեւան կուգան գիտէ՞ք։

Երկրի այս ու այն կողմերուն վրայ հայուն համար մեծ դժբաղդութիւն մ'է կը ծագի կամ կը ծագեցնեն...։ Համայնական կոտորած մը կամ ահեղ ջարդուած մը զորօրինակ...։

Համայնքին լուրջ և պարտաճանաչ մարդ իր ազգին ու եկեղեցւոյն պատկանող աղէտեալներուն օգնելու համար – և այս գլխաւորապէս կրնայ ըլլալ Եգիպտոսի համար նախանձելի! – հանգանակութեան ցուցակ մ'է կը բանայ. բոլորն ալ իր նուէրներուն մէջ խտրութիւն դնել կարելի չէ կողմնակիցներուն կողմէ.

Փառս կուտան կոր նէ՛ ... չէ՞։ Ու վերոյիշուած դասակարգին պատկանող խարդախ, խաբեբայ, կեղծարար և խայտառակ ու անբարոյական մակաբոյծները կը սպրդին հանգանակութեան ցուցակին մէջ ու հազիւ կամ քիչ մ'ալ աւելի առնալով ուրիշներու փոխան կ'ըլլան բարեգործ, ազգին դժբաղդութեան վրայ կարեկցող, հայութեան կարօտներուն վրայ լացող և չես գիտեր դեռ ինչե՜ր...։ Մինչդեռ այդպիսի ստորին ողորմ արարքներով ծանօթ խղճալի անբարոյականներուն երեսին նետելու էր իրենց քանի մը ղուրուշը «ըսելով որ ձեր դրամը պէտք չէ. գոնէ ձեր խորունկ ազնուութեամբն ու խայտառակութիւններով ազգին վիճակը ծանրացնելէ զգուշացէք, այնչափը բաւական է որ մեծ բարեգործութիւն մը ձեր կողմէ հայութեան ընծայուած...»։

* * *

Այս խորհրդածութիւնները ընելու թելադրուեցայ, երբ «Լուսաբեր» ըսուած «փտութեան օճախին» 11 Հոկտ. 909 Երեքշաբթի օրուան թիւին մէջ կարդացի Յ. Յ. Ճէպէճեան ստորագրութեամբ հրատարակուած «Բաց Նամակ» մը, Տիար Գ. Գմգմեանի ուղղուած, որով Պ. Յարութիւն Ճէպէճեան չքնաղագիտ ազգասէրի և ուղղամիտ օրէնսգէտի շպարը կը քսէր իր երեսին։ Ու շարժանքը մինչև ցայսօր ու թերևս տակաւին շատ մը ամիսներ ալ չը պիտի կրնամ զսպել, տեսնելով Յարութիւն Ճէպէճեանի պէս պարտազանց, անպարտաճանաչ, գաղտնութենէ զուրկ և իր անկարելի ոգիութեամբը ոճրագործութեանց, գողութեանց և աւարառութեանց մեղսակցող մէկը կելլէ մեր գըլխուն բարոյականի և պարտաճանաչութեան դասեր կարդալու։

Ո՜վ դարք, ո՜վ բարք...

Բայց ի՞նչ են Յարութիւն Ճէպէճեանին՝ որ աղէկ ճարտարութիւնն ալ գիտէ եղեր, բարոյագիտական դասերը. քանի մը բառով ամփոփենք։

1906 Մայիս 30ին, Հայոց Բարեգործական Ընկերութեան բաժնետէրերուն մեծամասնութեան որոշմամբ՝ ընկերութիւնը «կը լուծուի» և «կը դադրի», և 1906 Դեկտ 15ին «Լուսաբեր»ին մէջ ընկերութեան լուծումը կը ծանուցուի, ինչ ինչ կէտեր լուսաբանելով՝ որուն մէջ կըսուի նաև թէ՝ Եգիպտոսի համար երեք ամիս՝ իսկ արտասահմանի գտնուողներու համար վեց ամիս պայմանաժամ որոշուած է իրենց բաժնեթուղթերուն փոխարժէքը գանձելու համար, հակառակ պարագային մնացեալ գումարները Հայոց Առաջնորդարանին պիտի յանձնուին ի պարտ ու պատշաճ տնօրինութիւն...։

Ու քանի մը տող վարը, մեր «պօյաճի» Յ. Ճէպէճեանը, փայլ մը աւելցնելու համար իր ներկած տպանքներուն վրայ, բարեգործի հովեր կառնէ ու կըսէ. «մանաւանդ ներկայիս, ազգային մեծ տագնապի մը շրջանին, այդ գումարը մեծ ծառայութիւն մը կրնայ մատուցանել բարեգործական նպատակի մը գործածուելով։»

Վա՜յ ներկարար վա՜յ...
ինչ ալ աղէկ «ճիլա» տալ գիտես եղեր...։

Բարեգործական ընկերութեան գանձապետ Տ. Գրիգոր Գմգմեանին քով աւելցած դրամը Առաջնորդարանին յանձնուիլը կամ ոչ իր գրութեանս նիւթ ընելու դիտաւորութիւն չունիմ. Դուք առէք ու տուէք. կամ մի՛ տաք ու կերէ՛ք...։

Բայց քանի որ իբրև բանգէտ և բարեգործ և մանաւանդ ինչպէս կերևի Ճէպէճեանի տուած հովերէն, որ ընկերութեան մէջ վարչային գործօն անդամի մ'ալ դերը կատարած է, ինքզինքը նոր պօեայով մը ներկած ըլլալու գոհունակութիւնը պատճառելու համար, կուգամ հարցնել թէ՝ 1906 Յուլիս 13 Թուականաւ Եղիշէ Թորոսեանէն բոլորագրուած Բարեգործական Ընկերութեան հինգ բաժնեթղթերը ինչպէս կրցաք ուրիշին փոխանցել, քանի որ 1907 Ապրիլ 10ին Գահիրէի Հայոց Առաջնորդարանին կնի-

